ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 14

«13» 02 2020թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Ֆիրդուսու Հարությունյանին Լոռու կայազորի զինվորական դատախազի պաշտոնից ազատելու և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազի պաշտոնում նշանակելու, իսկ Լոռու կայազորի զինվորական դատախազի պարտականությունների կատարումը նույն կայազորի զինվորական դատախազի տեղակալ Արտակ Աշոտի Ավետիսյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 13.02.2020թ. համապատասխանաբար N 33-Ա և 34-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Կատարել Կ.Հարությունյանի կողմից՝ Լոռու կայազորի զինվորական դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Ա.Ավետիսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Հարությունյան Վահե - Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Խաչատրյան Մուրադ - Լոռու կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Աբաջյան Արուսյակ - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ

Հարությունյան Աստղիկ - Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության տարածքային վարչության պետ

Խալաթյան Նաիրա - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ

Բաղդասարյան Լևոն - Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ

Ավետիսյան Տաթևիկ - Լոռու կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի փետրվարի 28-ը:

**Ա. ԴԱՎԹՅԱՆ**